

17615

370.1

4-98

1919

Սօցիալիստական հրատարակչություն
Խմբագրություն ՍՈՒՐԷՆ ԵՐԶՆԿԵԱՆԻ

370.1

4-98

ՊՐՈԼԷՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ—ՄԻԱՑԷՔ

Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ԵՆ

ԴԷՄՕԿՐԱՏԻԱՆ

2010

2001

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԳՐՕԳՐԷՍ», Լ. Գողոսեանի

1919

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՒՆՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՒՆՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՍՏՐՈՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՍՏՐՈՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՍՏՐՈՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՍՏՐՈՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՍՏՐՈՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՍԵՍՏՐՈՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

370.1

4-38

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներկայ տեսութեան մէջ հեղինակն ուզում է ցոյց տալ, թէ ղէմօկրատիայի միջավայրում ինչպէս ծագեց ու զարգացաւ արտագրական աշխատանքը մըտաւոր զարգացման հետ միացնելու անհրաժեշտութեան գաղափարը ժողովրդական կրթութեան մէջ:

Այդ գաղափարը ծնւում է այն ժամանակաշրջանում, երբ խոշոր արդիւնաբերութիւնը սկսեց լայն չափերով օգտագործել ու գործադրել երեխայի աշխատանքը: Ուսուցումն արտագրական աշխատանքի հետ միացնելու անհրաժեշտութիւնը XVII դարում, առաջին անգամ մատնանշում է անգլիական գրող Ջոն Բէլլէրսը: XVIII և XIX դարերում այդ գաղափարը պաշտպանւում է ոչ միայն Անգլիայում, այլ և կօստրինենտի—մայր ցամաքի վրայ: Ռուսոն այդ գաղափարի ջերմ պաշտպան է հանդիսանում և այդ հարցի մասին ունեցած նրա տեսակէտը վառ արձագանք է գրտնում Ֆրանսիայում, Շվէյցարիայում, Գերմանիայում: Կօնվէնտը՝ Ֆրանսիայում ձգտում է օրէնսդրական ճանապարհով կիրառել այդ գաղափարը կեանքում, իսկ վառվճռն ղէմօկրատ Պէտաւօցցին Շվէյցարիայում իր ամբողջ կեանքը, իր կարողութիւնը նւիրում է նրան, որպէսզի ցոյց տայ թէ ժողովրդի կրթութեան գործում ինչպէս պէտք է գործնականապէս կիրառել արտագրական աշխատանքը: Բանւորական ղէմօկրատիան, յանձին Կարլ Մարքսի ու Ֆրիդրիխ Էնգէլսի, 50-ական թւականներին և աւելի ուշ, նորէն մէջ է

54562
9001

բերում այդ գաղափարը, զարգացնում և գիտականորեն հիմնավորում: Մարքսը «Կապիտալում» ցոյց է տալիս, թէ ինչպէս տէխնիկայի զարգացումն ինքնին առաջացնում է աշխատանքի կարող, բազմակողմանի զարգացած, պոլիտէխնիկորէն կրթւած բանւորի անհրաժեշտութիւնը:

Այնուամենայնիւ, մտաւոր զարգացումը ֆիզիքականին, ուսուցումն արտադրական աշխատանքին միացնելու՝ XVIII դարի գործիչների քարոզած միտքը և նրանց այդ ուղղութեամբ արած փորձերը շուտով մոռացութեան տուեցին: Որ չափով տասնեկիններորդ դարի առաջին երեք քառորդում կապիտալը կարիք ունէր գլխավորապէս այնպիսի աշխատանքի, որը բանւորից նախաձեռնութիւն, լարումն, գիտութիւն, ճարպիկութիւն ու մասնագիտութիւն չէր պահանջում, այն չափով ժողովրդի բազմակողմանի, մտաւոր լայն զարգացումը այլ և այլ ֆիզիքական աշխատանքի հետ միացած կրթութիւն պահանջող դէմօկրատների ձայնը կորչում էր ապարդիւն: Ծիշտ է ժողովրդական դպրոցների թիւն աճում էր, բայց դրանք «ուսումի» դպրոցներ էին, ուր ոչ մի ֆիզիքական աշխատանք չէր մտած, ուր միայն կարդալ, գրել ու հաշուել էին սովորեցնում և գլխավորապէս ուշադրութիւն դարձնում հլու, կամակատար, հնազանդ բանւորներ կրթելու վրայ:

XX դարը տէխնիկայի հզօր զարգացման շնորհիւ, առանձին թափով ասպարէզ հանեց ժամանակակից տէխնօլօգիայի նոր տէնդէնցը—մեքենայի աշխատանքի կենդրոնացումը: Բազմանում է բազմակողմանի զարգացած, տեղեակ բանւորի պահանջը,—բանւորի, որ կարողանայ արագութեամբ իւրանալ ու յարմարել յարափոփոխ ու կատարելագործւող մեքենաներին և արդիւնագործութեան նոր ձևերին: Ի հարկէ, այդ տէնդէնցն ամենից առաջ նկատուեց արդիւնարբութեամբ աւելի զարգացած երկրներում—Ամերիկայում ու Գերմանիայում: Կապիտալիստական առա-

ջաւոր երկրները յատուկ ուշադրութիւն են դարձնում բազմունակ բանւորներ պատրաստելու վրայ: Կազմակերպում ու հիմնում են ամեն տեսակ պրօֆէսսիօնալ դպրոցներ, երեկոյեան դասընթացքներ և այլն: Պատրաստի բանւորների պահանջի ուժեղացումով, տէխնիքական կրթութիւնն ևս ձգտում է հանրանալու: Նրան սկսում են կապել նախնական ուսման հետ և, այդ նպատակով, բարեփոխում են ժողովրդական դըպրոցը: Ամերիկայում, իսկ վերջերս Գերմանիայում «ուսումի» դպրոցները տեղի են տալիս աշխատային դպրոցներին (Arbeitsschule): Աշխատային դպրոցները, հասկանալի է, որ չեն կարող առաջնորդւել այն սկզբբունքներով, որոնց վրայ հիմնւում էր «ուսումի» դպրոցը: Նա աշակերտներից պահանջում է ինքնուրոյնութեան, անհատականութեան զարգացում: Աշակերտի անհատականութեան ձնշումն ու արտաքին կարգապահութիւնը օտար ու խորթ են աշխատային դպրոցների նպատակներին: Նոր մէթօդները պահանջում են միանգամայն այլ դասատուներ: Ռուտինայի սովոր ու իր անելիք ամեն մի քայլի համար ցուցած մունքի կարօտ ու սպասող ուսուցիչը այդ տեսակ դպրոցին պիտանի լինել չի կարող: Աշխատային դըպրոցը անհատականացման նկատմամբ ջերմ վերաբերմունք է պահանջում: Հսկելու հին ձևերը չեն իրականանում: Հարկաւոր է ուսուցիչների և ազգաբնակչութեան փոխադարձ հսկողութիւն: Բայց հասարակութիւնը միայն հսկելով չի բաւականանալու. նա ամենաշնորհ մասնակցութիւն է ցոյց տալու գործին: Աշխատային դպրոցի նպատակն է ուսուցումը շաղկապել արդիւնագործութեան հետ. իսկ այդ նպատակին հասնել անհնար է առանց բանւոր ազգաբնակչութեան, առանց նրա կազմակերպութիւնների:

Տնտեսական զարգացումը յամառաբար պահանջում է «ուսումի» դպրոցը վերածել, աշխատային դըպրոցի բայց այդ բարեփոխութիւնն իրագործել ան-

կարելի է առանց ժողովրդի կրթութեան ամբողջ կազմակերպութեան վերակառուցման:

XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում ժողովրդական կրթութեան մէջ արտադրական աշխատանքի կատարած դերի մասին տիրապետող հայեացքը:

Ժողովուրդների պատմութեան մէջ լինում են ժամէնտներ, երբ արդիւնագործութեան եղանակի արմատական փոփոխութիւնների ազդեցութեան տակ, ամբողջ կեանքը սկսում է հոսել մի բոլորովին նոր հունով: Հին, սովորական չափերն արդէն միանգամայն անգործադրելի են տնտեսական, ընտանեկան, իրաւական յարաբերութիւնների նոր պայմաններում: Այդ յարաբերութիւնները ոչ մի կերպ չեն պարփակում հասարակական հին շրջանակներում: Նրանց անհամապատասխանութիւնը կեանքի նոր պայմաններին առանձնապէս խիստ է աչքի ընկնում: Սկսում է հնի անխնայ քննադատութիւնը: Աւելի առաջաւոր գլուխներ տեսնում են հասարակական յարաբերութիւնների նոր ձևեր ստեղծելու անխուսափելիութիւնը:

Ժողովուրդների կեանքի այդօրինակ մամէնտներում, եղած բոլոր հարցերը դրւում են առանձնապէս լայն, սկզբունքօրէն յատկապէս շիտակ ու ըստ էութեան:

Ինչպէս յայտնի է, Եւրոպայի համար այդպիսի մի ժամանակաշրջան էր XVIII դարի վերջը—Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ու նրան անմիջապէս յաջորդող շրջանը: Խոշոր արդիւնաբերութիւնը ներհակ հանդիսացաւ համքարական կարգերին, սովորութիւններին, օրէնսդրութեան. դրամատնտեսութիւնը արմատապէս փոխեց աւատական յարաբերութիւնները և անտանելի դարձրեց գիւղացու կեանքը: Ֆէօդալ տիրակալների արդարադատութիւնը, փոփոխող պայմաններում սոսկալի կամայականութիւն էր համարւում: Ժողովրդական մասաները, որոնց մասին հնում

ոչինչ չէր լսւում և որոնք ապրում էին դաշտի խոտի նման—ասպարէզ եկան:

Նրանց չքաւորութիւնն ու տգիտութիւնը ամենքի աչքի առաջն էր: Սկսեցին խօսել «ժողովրդի» մասին: Ծագեց ժողովրդական կրթութեան հարցը: Մինչ այն գոյութիւն ունեցող դպրոցները բարձր ու միջին դասերի համար էին, ստորին դասերի դպրոցները լոկ բացառութիւն էին և ծառայում էին շատ նեղ նպատակների:

Ժողովրդական կրթութեան այդ նոր հարցը տաք վիճարանութիւնների նիւթ դարձաւ, դրեց լայն հիմքերի վրայ և կապւում էր ժողովրդի բարւոք վիճակի ու պետական օրէնսդրութեան ընդհանուր հարցերի շարքում: Եւ որովհետև հարցը այդպիսի լայն շրջանակներում էր դրւած ու շոշափում էր ժամանակակից հերթական ու հրատապ խնդիրներ—ուստի կարևոր է իմանալ, թէ ինչպէս էր նա դրւում: Սրանով մենք ժողովրդական կրթութեան հերթական շատ հարցեր կտեսնենք նոր լուսարանութեամբ, նոր կողմերից:

Փայլուն օրինակ կարող է համարւել ուսումը արտադրական աշխատանքի հետ միացնելու հարցը:

Շատերը կարծում են, թէ պօլիտէխնիքական կրթութեան հարցը մօտ ժամանակների խնդիր է, առաջացած Ամերիկայում ու Գերմանիայում: Մինչդեռ այդ հարցը ոչ միայն բազմակողմանի ու տաք քննութեան է ենթարկւել XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում, այլև այն ժամանակաշրջանի մի շարք գործիչներ ձգտել են այդ գաղափարը կեանքում կիրառել, փորձով ստուգել:

Պէստալոցցին դպրոց է հիմնում Նէյօֆում, ուր տքնում է իրականացնել արտադրական աշխատանքը ուսման հետ միացնելու գաղափարը: Նման դպրոց է հիմնում իր Հօֆիլ կալւածում մի ուրիշ շվեյցարացի Ֆելլենբէրգը. աւելի ուշ Նիւ-Լանարկում—Օուէնը, Կօնդօրսէն, Ռօմմը, Հադէնֆրանցը ձգտում են իրենց

գաղափարները կեանք մտցնել օրէնսդրական եղանակով:

Այս փորձերը ահագին նշանակութիւն ունին: Նրանց մեծ մասը ի դերն ելաւ և այս անյաջողութիւնը նպաստեց ըուտինեօրներին. նրանք սկսեցին աղաղակել, թէ այդ գաղափարները ցնդաբանութիւններ, ուտօպիաներ են: Բայց թէ որքան կենսական տարրեր են պարունակել այդ գաղափարները, երևում է նրանից, որ մի դար անց, սոստեսական զարգացման ընթացքը նոյն հարցերը հրապարակ հանեց երկաթէ անհրաժեշտութեամբ:

Չափազանց կարևոր է մօտից ծանօթանալ այդ գաղափարների հետ, քննել նրանց իր ժամանակի սոստեսական ու հասարակական զարգացման կից, պարզել թէ ի՞նչն էր պատճառը, ինչո՞ւ ձեռնարկած փորձերը չաջողեցին, ինչո՞ւ չէին կարող աջողել այն ժամանակի պայմաններում, և այդ հարցերում եղած կենսականն ու էականը իրականացնելու համար սրպիսի պայմաններ են հարկաւոր:

Ժ ա ն ժ ա կ Ռ ու ս ու ո

Սկսեմք Ռուսօից, նրա հռչակաւոր էմիլից: Այս, 1761 թւին լոյս տեսած գիրքը ահագին աղդեցութիւն ունեցաւ մանկավարժական մտքի վրայ: Ժամանակակից դաստիարակութեան մէթօդների կրքոտ քննադատութեամբ, Ռուսսօն խորապէս ցնցեց մտքերը, լուսավառեց ժամանակակից անձոնի դաստիարակութիւնը, նրա դասային բնոյթը, անբնականութիւնը: Հասարակական միտքը այդ ուղղութեամբ աշխատել սկսաւ: Այն, ինչ որ քիչ առաջ ոչ ոքի ուշադրութիւնը չէր գրաւում և համարւում էր նօրմալ—այժմ բողոք է յարուցում և գոյութիւն ունեցող կարգերը փոփոխելու ձգտումներ ծնում:

Ի հարկէ, ամեն մի երկրում, նայած հասարակական ընդհանուր պայմաններին Ռուսսօն տարբեր կեր-

պերպով էր հասկացւում: Էմիլում արծարծւած գաղափարները իւրաքանչիւր մտածողի մէջ բեկանւում էր նրա աշխարհայեացքի պրիզմայի միջով:

Այն միջոցին, դեռ ևս տնտեսապէս ու քաղաքականապէս յետամնաց Գերմանիայում առաջացաւ մանկավարժական մի նոր, ֆիլանտրոպիստների հոսանքը: Նրա գլուխ էին կանգնել Բադէդօվը, Կասպէն, Ջայցմանը, Գուտսմուտը: Ֆիլանտրոպիստները մեծ ուշադրութիւն էին դարձնում Ռուսսօյի քարոզածների վրայ, թէ պէտք է բնութեան վերադառնալ: Նրանք դպրոցներ հիմնում էին ոչ թէ քաղաքներում, այլ բնութեան ծոցում. մեծ ուշադրութիւն էին դարձնում առողջութեան, դիմացկանութեան, ճանապարհորդութեան և թարմ օդում խաղալու վրայ: Ջայցմանի կարծիքով («Etwas über Erziehung») առաջին հանգանակը, որ իւրացնելու են մանուկները, բաղկացած է լինելու առողջութեան վերաբերող մի շարք հարցերից: Օրինակ. ինչպէս պաշտպանել ատամնացաւից, ինչպէս պահպանել սուր տեսողութիւնը և այլն: Ֆիլանտրոպիստներում աշակերտները կրում էին պարզ հագուստ, ուտում էին հասարակ ճաշ: Բադէդօվի Դեսսաու 1774 թւին հիմնած առաջին ֆիլանտրոպիստում—Ռուսսօի գաղափարները իրականացնելու համար—երեխաների մէջ որոշ ըէժիմի այս ու այն սովորութիւնները չարմատացնելու նպատակով, ընդունւած էին այսպէս կոչւած «գիպւածական օրեր», երբ ընթացիկ սովորական կեանքը միանգամայն խանգարւում էր, աշակերտներն ամբողջ գիշեր մնում էին արթուն, մինչև երեկոյ չէին ուտում և այլն:

Գերմանական գրող ժան Պօլ Բիխտերը («Լեա նա») մանկավարժական գրւածքի հեղինակը) Բադէդօվին անւանում է «Ռուսսօյի հոգևոր մեկնիչ ու ժողովրդականացնող»: Բայց նրա այդ բնորոշման պատճառը Ռուսսօյին մակերևոյթօրէն, նեղ ու երբեմն ծիծաղելու աստիճան իր թիւր ըմբռնելն էր: Առհասարակ, ֆիլանտրոպիստներին միանգամայն անհասկանալի,

օտար էր խոր դէմօկրատական ոգի շնչող էմիլը: Նրանք չէին հասկանում այն յարգանքը, որով տոգորած էր այդ գիրքը դէպի աշխատանքն ու աշխատաւորները:

Չայցմանն, օրինակ, ժողովրդի համար «Կօնրադ Կիֆեր» անունով մի վէպ է գրում, ուր աշխատում է ցոյց տալ, թէ Ռուսօրի գաղափարները ինչպէս պէտք է կիրառեն գիւղացու կեանքում: Բայց որովհետեւ Ռուսօրից առնուում է միայն այն, ինչ որ կարող էր իրականանալ ժամանակակից Գերմանիայի քաղաքական ու հասարակական պայմաններում, ուստի մի կողմ է ձգում գործի հասարակական մասը, այն՝ ինչ որ էմիլի «հոգին» է, ինչ որ այնպիսի հակայական ազդեցութիւն ունէր ժամանակակիցների վրայ:

Տառի յետևից ընկնելով, Ֆիլանտրօպիստները բոլորովին աչքաթող էին անում էմիլի հոգին:

Այսպէս օրինակ, էմիլում Ռուսօն իրեն սան է վերցնում հարուստ շրջանից: Բայց ինչո՞ւ է այդպէս վարուում: Նա մի նպատակ ունի—ցոյց տալ թէ ինչպէս պէտք է առհասարակ մարդ դաստիարակել *): Դրա համար նրան հարկաւոր են բացառիկ պայմաններ: Եւ այդ տեսակ պայմաններ իր որդու համար միայն հարուստը կարող է ստեղծել, բայց ոչ աղքատը:

Բայց Բազէդօվը այդ ընտրութիւնը մեկնում է այլ կերպ, թէ ուշադրութիւն պէտք է դարձնել բացառապէս հարուստների դաստիարակութեան վրայ—մի բան, որ տրամագծօրէն հակառակ է Ռուսօրի գրածքի ընդհանուր ոգուն: «Իմ առաջարկներն ու

*) Ինչ վերաբերում է ինձ,—գրում է Ռուսօն էմիլում—ես ուզում եմ նրան տալ մի կոչում, որ երբէք չի կարող կորցնել, որը նրան միշտ պատիւ կբերի. ուզում եմ նրան բարձրացնել, հասցնել մինչ մարդու կոչում: Եւ ինչ էլ որ ասելու լինէք, այս դէպքում նրան հաւասար մարդկանց թիւը աւելի սակաւ կլինի, քան ձեզանից ստացած բոլոր տիտղոսներն ունենալիս:

մանկավարժական աշխատանքները—գրում է Բազէդօվը—լոկ հարուստ դասերի համար են, սկսած իշխաններից և վերջացրած վաճառականների ու նկարիչների որդիներով: Այս հիւանդոտ և աւելի արժեքաւոր խաւի աշխարհիկ դաստիարակութիւնը պէտք է անառարկ կրի գործնական, այդ դասին յատուկ ու հարկաւոր ընոյթ: Հարկաւոր է գիտելիքների նւազագոյն չափ, բայց նրանք պէտք է խիստ ընտրովի լինեն և վերցնեն բարձր դասերի պահեստի բոլոր գիտելիքներից»:

Ռուսօն խոսում է «մարդ» դաստիարակելու մասին. Բազէդօվը արտօնեալ դասերի զաւակներ դաստիարակելու մասին...

Թէ որքան հեռու էր Բազէդօվը Ռուսօյին հասկանալուց, երևում է նրանից, որ իր ֆիլանտրօպիստում նա մտցրեց «Ֆամուլանտներ», աշակերտ-ծառայներ: Սրանք գտնուում էին արտօնեալ դասերի աշակերտների տրամադրութեան տակ: Ֆամուլանտները մաքրում էին նրանց կօշիկները, տեղաւորում մահճակալները, մատուցում այլ և այլ ծառայութիւններ: Իբր պատիժ—արտօնեալ աշակերտները դասուում էին Ֆամուլանտների դասը և պարտաւոր էին սև աշխատանք կատարել: Այդ աշխատանքը համարուում էր անպատւաբեր, լոկ ստորին խաւերի գործ: Թէև ֆիլանտրօպիստում գործադրուում էր ֆիզիքական աշխատանք, բայց իբր ժամանց, իբր զւարճալիք: Ֆիզիքական ոյժերը զարգացնելու համար գործադրուող արտադրական աշխատանքը համարուում էր ստոր աշխատանք:

Ռուսօն այլ կերպ է նայում գործին:

«Հասարակութիւնից դուրս, միայնակ մարդը ոչ ոքի ոչինչ պարտաւոր չլինելով, իրաւունք ունի ապրելու այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում. բայց հասարակութեան մէջ, ուր նա անպայման ուրիշի հաշիւին է ապրում, իր ապրուստի դիւնը պէտք է վճարէ աշխատանքով: Այստեղ բացառութիւն կազմել չի կարելի: Այսպիսով, աշխատանքը անխուսափելի պարտա-

ւորութիւն է ամեն մի հասարակական մարդու համար, լինի նա հարուստ թէ աղքատ, հզօր թէ թույլ. ամեն մի պարապ քաղաքացի գող է:

«Մարդուն կերակրող բոլոր դբադմունքներէց նրան բնական գրութեան մօտեցնողը—ձեռքի աշխատանքն է. հարստութիւնից ու մարդկանցից աւելի անկախ պրօֆէսսիան—արհեստաւորի պրօֆէսսիան է: Արհեստաւորը կախումն ունի միայն իր արհեստից: Նա նոյնքան ազատ է, որքան երկրագործ գորուկը. այն, ստրուկը, որովհետև նա կապուած է հողի հետ, որի բերքը ուրիշի տրամադրութեան տակ է: Թշնամին, իշխանը, հզօր-հարևանը, հողային կոիւնները կարող են նրան զրկել հողից և այսպիսով կարող են նրան հազար ու մի տհաճութիւն պատճառել. բայց երբ ուզում են տհաճութիւն պատճառել արհեստաւորին, նա իր իրերը կապում է ու գնում, տանելով իր ձեռքերը: Ի հարկէ երկրագործութիւնն ամենալաւ աշխատանքն է, ամենաազնիւը, ամենաօգտաւէտը, ուստի և ամենաընտիրը բոլոր աշխատանքներից: Ես էմիլին ասում եմ.— ուսումնասիրիր երկրագործութիւնը: Նա արդէն ծանօթ է, գիտէ՝ բոլոր գիւղական աշխատանքները. նրանցից է սկսել և ղէպի նրանց է վերադառնում: Ուստի ես ասում եմ նրան— մշակիր քո հայրերի թողած ժառանգութիւնը, բայց եթէ կորցրիր այդ ժառանգութիւնը, կամ թէ չունես—ի՛նչ արած, արհեստ սովորիր»: (էմիլ եր. 380):

Միամիտ էջեր: Այժմ այս էջերը կարող է գրել միայն կեղծաւորը: Այժմ մենք գիտենք արհեստաւորի ազատութեան արժէքը, արհեստաւորի, որ բացի իր ձեռքերից ուրիշ ոչինչ չունի: Բայց 150 տարի առաջ, երբ արդիւնաբերութիւնը նոր էր ծաղկում, երբ կապիտալիզմը դեռ չէր ցոյց տւել իր մութ կողմերի բոլոր առաւելութիւնները, այս խօսքերը բոլորովին այլ կերպ էին հնչում: Նրանք հնչում էին իբր աշխատանքի յարգանաց ղօղանջներ. նրանց միջից լսում էր արտօնութիւնների վրայ կառուցւած, դասերի բա-

ժանւած հասարակութեան դէմ բողոքող ցասումը:

Եւ այս բոլորին խուլ ու անտարբեր մնացին ֆիլանտրօպիստները. այս բոլորը նրանց համար եօթփականքով փակւած մի գիրք էր:

Ռուսսօի մանկավարժական գաղափարների հասարակական կողմը վառ արձագանք գտաւ Շվէյցացարիայում, որն, ինչպէս և Ֆրանսիան, դեռ նախայեղափոխական շրջանն էր ապրում— թէև փոքր ինչ այլ մասշտաբով: Շվէյցարիայի մտածողների թւում, որոնց վրայ էմիլը խոր տպաւորութիւն թողեց, գտնւում էր և Պէստալօցցին: Ահա թէ ինչպէս է նկարագրում նա իր «Կարապի երգում» այն տպաւորութիւնը, որ նրա վրայ գործել է էմիլը. «Երբ երևաց նրա էմիլը, իմ ծայրայեղ, անգործնական, երազկոտ միտքը, այս՝ նոյն աստիճան անգործնական՝ անուշաներով լի գրքի ազդեցութեան տակ, ոգևորութեամբ բռնկեց: Ես համեմատում էի տանը մօրիցս և ապա դպրոցում ստացած դաստիարակութիւնը այն դաստիարակութեան հետ, որն ուզում էր ու պահանջում Ռուսսօն իր էմիլի համար: Թէ ընտանեկան և թէ հասարակական դաստիարակութիւնը, ամենուրէք, բոլոր դասերի մօտ, ինձ թւում էր անպայման յօշոտւած: Թւում էր ընդհանուր հակաթոյն կարելի է որոնել ու գտնել լոկ Ռուսսօի վերամբարձ գաղափարների մէջ: Ռուսսօի իդէալիստօրէն հիմնաւորած ու նրա միջոցով կենք ստացած ազատութեան սիստեմը իմ մէջ աւելի ուժեղացրեց յօգուտ ժողովրդի գործունէութեան լայն, արդիւնաւէտ ասպարէզ որոնելու ցնորամիտ ձգտումը»: (Pestalozzi—«Schuanengesang» bei Seyffath XIV, 200).

Մենք տեսանք, որ Ռուսսօն աշխատանքը համարում է իրաւքանչիւրի հասարակական պարտականութիւնը: Այս սկզբունքից բխում է, որ կրթութիւնը պէտք է սովորեցնի աշխատել: Էմիլը լաւ ծանօթ է երկրագործական աշխատանքի հետ, նա ուսումնասիրում է մի շարք արհեստներ:

Ռուսոն ձեռքի աշխատանքն ևս համարում է մանկան մտաւոր կարողութիւնները զարգացնող միջոց:

«Ընթերցող, դու դրանում (ձեռքի աշխատանքով զբաղելու մէջ) տեսնելու չես լոկ մեր աշակերտի ֆիզիքական վարժութիւններ ու ձեռքերի ճկնութեան զարգացում: Ուշադրութիւն պէտք է դարձնել թէ ինչ ուղղութեամբ ենք տանում նրա մանկական հետաքրքրութիւնը, նախատեսութիւնը, ինչ ձև ենք տալիս նրա մտքին: Այն ամենը, ինչ որ տեսնի, ինչ որ անի, կուզենայ մինչև վերջն իմանալ, գտնել պատճառը. գործիքից գործիք անցնելով, նա միշտ կուզենայ իմանալ թէ ինչո՞վ ու ինչո՞ք է շինած. նա ոչինչ չի ենթադրելու:

«Նախնական գիտելիքներ պահանջող ոչ մի բան աշակերտը չի ուսումնասիրելու: Եթէ տեսնի թէ ինչպէս է շինուում պտուտակը, կուզենայ իմանալ նրա նիւթ դարձած պողպատի որտեղից հանելը. եթէ նա տեսնի թէ ինչպէս են կապում սնդուկը իր օժանդակ մասերից, կուզենայ իմանալ ծառ կտրելն ու սղոցելը: Ամեն մի գործիք գործածելիս, իրան հարց կտայ, թէ այս գործիքը չունենալու դէպքում, ինչ հնարքով պէտք է շինէի, կամ կարո՞ղ էի առանց սրան գործ անել» (Էմիլ եր. 364):

Երեխայական աշխատանքի նպատակը Ռուսոյի համար այդ աշխատանքի արդիւնքը կամ հետեանքը չէ, այլ նրա դաստիարակչական նշանակութիւնը, որ ունի երեխայի համար: Հարկաւոր է ոչ թէ մեքենայական, այլ որոշ նպատակ ունեցող, միտք զբաղեցնող աշխատանք:

Թէև Ռուսոն ուզում է, որ իր սանը ուսումնասիրի որևէ արհեստ, բայց նա գլխաւոր նշանակութիւնը տալիս է ոչ թէ պրօֆէսիօնալ, այլ պօլիտէխնիքական ուսուցմանը, ոչ թէ որևէ մասնագիտութեան, այլ առհասարակ աշխատանքի պատրաստելուն:

«Գուցէ մեծ նշանակութիւն ենք տալիս արհեստի ընտրութեան: Քանի որ հարցը ձեռքի աշխատանքի մասին է, ապա Էմիլի համար ընտրութիւնն առանձին նշանակութիւն չունի: Նա արդէն կիսով չափ պատրաստ է ամեն մի արհեստի շնորհիւ այն պարագամունքների, որոնցով նա առաջ զբաղուում էր: Ինչ էք ուզում, որ անի. նա ամեն ինչի պատրաստ է, կարողանում է քլունգ ու թի բանեցնել, գործ է ածում մուրճ ու ուրագ, քերիչ ու բրիչ: Ամեն արհեստի գործիք բանեցնելու վարժ է. պէտք է միայն այդ գործիքներից որևէ մէկը աւելի արագ ու ճարպիկ գործածութեան վարժութիւն ձեռք բերի, որպէսզի կարողանայ այդ արհեստի բանւորի, մասնագէտի հետ համեմատել, նրա հետ մրցել: Նրա միւս առաւելութիւնը կլինի և այն, որ ճարպիկ մարմին, ճկուն անդամներ կունենայ սրանք կհեշտացնեն նրա բունելիք այս կամ այն դիրքը և առանց որևէ ջանք թափելու կարող է շարժումներ գործել: Սրան աւելացրէք և այն, որ նա կանոնաւոր ու զարգացած արտաքին զգայարաններ ունի, բոլոր արհեստների մէխանիզմին ծանօթ է, իբրև մասնագէտ աշխատելու համար նրան պակասում է սովորոյթը, մի բան որ ձեռք է բերոււմ ժամանակի ընթացքում» (Էմիլ եր. 390):

Պօլիտէխնիքական կրթութիւնը Ռուսոյի համար նոյնպէս մի միջոց է, որը աշակերտին հնարաւորութիւն է տալու հասարակական յարաբերութիւնների մասին ճիշտ գաղափար կազմելու:

«Դուք պարտաւոր էք աշխատել, որպէսզի աշակերտի մտքից մի կողմ վաճառեն հասարակական յարաբերութիւններին վերաբերող բոլոր ցուցմունքները: Նա անկարող է դրանց գնահատել. բայց երբ գիտելիքների հետևողական կապակցութիւնը ձեռք ստիպի նրան ցոյց տալ մարդկանց փոխադարձ յարաբերութիւնները, այդ յարաբերութիւնների բարոյականի մասին խօսելու փոխարէն, նրա ամբողջ ուշադրութիւնը դարձրէք դէպի արդիւնաբերութիւնն ու արհեստները,

որոնք մարդկանց իրար օգտակար են դարձնում փոխադարձաբար: Նրան արհեստանոցից արհեստանոց տանելիս, մի թողնէք, որ առանց գործ անելու դուրս գայ արհեստանոցից, մինչև որ չհասկանայ այն բոլորի իմաստը, ինչ որ այնտեղ արւում է, կամ թէ գոնէ տեսել է: Ուստի դուք ևս զնացէք և նրան օրինակ հանդիսացէք. նրան գործի վարպետ դարձնելու համար ամեն տեղ աշակերտեցէք և համոզւած եղէք, որ աշխատանքի մի ժամը նրան աւելի բան կտայ, քան բացատրութիւնների ամբողջ օրը: (Էմիլ Եր. 358).

Ուրեմն —

«Դաստիարակի շնորհքը կայանալու է նրանում, որ աշակերտի ուշադրութիւնը աննշան մանրունքով չգրաււի, այլ գրաււի փաստերով, որոնք նրան երես առ երես կանգնեցնում են մարդկանց փոխ-յարաբերութիւնների խոշոր երևոյթների դիմաց: Նա այդ երևոյթները գիտակցելու է, որպէսզի կարողանայ դատել հասարակական կարգերի լաւ ու վատ կողմերի մասին»: (Էմիլ Եր. 368):

Այսպիսով, ըստ Ռուսսօի, պօլիտէխնիքական կրթութիւնը հնարաւոր է դարձնում հասարակական կարգերի ճիշտ արժէքն ըմբռնելը: Աշխատային յարաբերութիւնները սօցիալական յարաբերութիւնների ու նրանց իրաւացիութեան չափանիշ են լինելու: Իսկ այդ յարաբերութիւնների բաւարար զնահատութեան համար աշակերտը ոչ թէ հանդիսատես է լինելու, այլ ունենալու է գործոն մասնակցութիւն: Միայն իր կատարած գործով, նրա բարդութիւնը, դժւարութիւնը փորձով իմանալուց յետոյ, կարող է խօսել արդիւնագործութեան այս կամ այն ճիւղի հասարակական նշանակութեան մասին: Ռուսսօի համար մեծ նշանակութիւն ունի նաև այն հանգամանքը, որ իւրաքանչիւր արհեստ իւրաքանչիւր արդիւնագործութիւն ուսումնասիրւում է ոչ միայն իբր արհեստ, այլ և իբր հասարակական յարաբերութիւն:

«Դժբաղտաբար մեր ունեցած բոլոր ժամանակը

2013
« Ազգային գրադարան



17061
NL0051668

